Նա երբեք չէ թառամում, որպէս իր ծմակների մշտականաչ կիպարիսը: Նա երբեք չէ ծերանում, որպէս իր թաւուտների դարեւոր եղեւնին: Հզօր կուրծքը մերկ, զօրաւոր բազուկները հոլանի, գլխին թաղիքեայ կոնաձեւ քոլոզը դրած, եւ նրա վրայ գոյնզգոյն թաշկինակներ փաթաթած, որոնց ծայրերը՝ ոսկեգոյն մազերի երկայն գիսակների հետ՝ թափւում են լայն թիկունքի վրայ, հագին մի կարճ քազախայ (կուրտիկ) հագած, որի ամրութիւնը, երկաթեայ զրահի նման, կարող է դիմանալ ամենասուր դաշոյնի առջեւ, ներքին հագուստը մազեղէն զոլ-զոլ շալոարի մէջ հաւաքած, դուք կը տեսնէք Ռշտունեաց լեռների այդ զաւակին, երկար նիզակը ձեռին, թեթեւ վագրի նման, անցնում է մի ապառաժից դէպի միւսը: Նրա նիզակը, որ երկու ծայրերում եւս սուր երկաթներ ունի, ծառայում է ե՛ւ իբրեւ զէնք, ե՛ւ իբրեւ նեցուկ, որ, գետնի մէջ ցցելով, հենւում է նրա վրայ եւ ոստումներ է գործում սարսափելի վիհերի վրայից: Այդ բոլորը այնքան արագ է կատարւում. որ դու կարծում ես, թէ նա թռչունի նման թեւքեր ունի եւ օդի մէջ սլանում է: Նրա թաղիքեայ փափուկ տրեխների տակերը ամբողջապէս գամած են սրածայր բեւեռներով, որ չսահի, որ չսայթաքեն ժայռերի վրայ ման գալու ժամանակ: Գօտիի մէջ խրած ունի մի կեռ խենջար, որի կոթը դերձանով կապած է պատեանին. այդ կապանքը նրա համար է, որ մինչեւ արձակելը՝ նրա բարկութիւնը անցնի, իսկ երբ մերկացրեց սուրը՝ գործողութիւնը արդէն վճռած է, մինչեւ արեան մէջ չզովացնէ, իր տեղը չի դնի: Թշնամու հետ անգութ է, իբրեւ գազան, բարեկամի հետ բարի է, իբրեւ հրեշտակը: Իր հովիտների բարձրահասակ սօսիների նման գեղեցիկ է նա. Երբ նայում է քո երեսին, դու զմայլւում ես: Նրա կապուտակ աչքերը այնքան լուսափայլ, այնքան ընդարձակ եւ այնքան խորն են, որպէս այն կապուտակ ծովը, որ ծփում է նրա աշխարհի մօտ: նրա այրական դէմքը այնքան արձակ եւ այնքան պայծառ է, որպէս Ռշտունեաց պարզ երկինքը: Ռշտունեաց պարզ երկնքի նման, այդ խաղաղ դէմքը յանկարծ մռայլւում է, մթնում է, շանթեր է արձակում, երբ խաղաղ եղանակը փոխւում է, եւ տեղի է ունենում վերահաս փոթորիկը... Այդ միջոցին նա չէ խօսում, այլ որոտում է, եւ այդ որոտման ձայնի մէջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը իր բոլոր կոշտ ու անտաշ ձեւերով: Բայց այդ կոշտ հնչիւնները քո հոգուն այնքան ազդու են, քո սրտին այնքան կախարդիչ են, որ, որքան էլ եւ ընկած լինէիր դու հոգով, յանկարծ ներշնչւում ես մի անբացատրելի ոգեւորութեամբ... Եւ երբ դու տեսնում ես, թէ ինչպէս նա իր միակ զէնքով՝ նիզակով, կռւում է մթին ծմակից դուրս պրծած ամեհի վարազի հետ, իսկոյն հին առասպելը կենդանանում է քո մտքում, եւ դու յիշում ես «վիշապաքաղէ Վահագնին, հայոց անպարտելի Հերքուլեսին, յիշում ես, եւ սքան-